ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Դատավորների կարգապահական պատասխանատվության 2012-2017 թվականների պրակտիկան

ՀՀ Արդարադատության խորհրդի որոշումների վերլուծություն



ԵՐԵՎԱՆ 2019

Վերլուծությունը պատրաստվել է 2019թ.-ին «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կողմից «Բաց հասարակության հիմնադրամներ» Հայաստան կազմակերպության աջակցությամբ:

Վերլուծության բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն «Բաց հասարակության հիմնադրամներ» Հայաստան կազմակերպության տեսակետների հետ:

Ուսումնասիրությունն իրականացվել և վերլուծությունը կազմվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի իրավական փորձագետներ Հայկուհի Հարությունյանի, Արաքս Մելքոնյանի , Հասմիկ Հարությունյանի, Նինա Հակոբյանի կողմից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դատական իշխանության և դատավորների անկախությունը իրավունքի գերակայության ապահովման հիմնաքարն է և պետք է պաշտպանվի՝ ի նպաստ հանրության և քաղաքացու, այլ ոչ դատավորի շահերի: Սակայն դատավորի անկախությունն ուղղակիորեն կապված է նրա պատասխանատվության հետ և հանդիսանում է դատական իշխանության նկատմամբ հասարակության վստահության նախապայման: Հետևաբար, դատավորների նկատմամբ պատշաճ կարգապահական մեխանիզմներն անհրաժեշտ են հասարակության նկատմամբ նրանց պատասխանատվության ապահովման համար: Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվությունը հաճախ օգտագործվում է նաև որպես դատավորների անկախությանը միջամտելու և հետապնդման միջոց: Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթները օրենքի մեկնաբանության և փաստերի գնահատման համար հաճախ հանդիպող երևույթ են, ավելին նրանք կարող են հետապնդվել պատասխանատվության ոչ պատշաճ միջոցի կիրառմամբ և այլ մեթոդներով:

Հետևաբար, դատավորի նկատմամբ կիրառված ցանկացած կարգապահական գործընթաց և միջոց պետք է կարգավորվի օրենքով, որոնք կապահովեն դատավորի համար պատշաճ երաշխիքներ և բացառեն դատավորի նկատմամբ ցանկացած անհարկի հետապնդում և միջամտություն նրա դատական գործունեությանը: Միջազգային չափանիշների համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ընթացակարգերը պետք է իրականացվեն անկախ մարմնի կողմից, հստակ և օբյեկտիվ հիմքերի հիման վրա, առանց հապաղումների և դատավորի համար արդար դատաքննության երաշխիքների խստիվ պահպանմամբ, այդ թվում՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման հնարավորությամբ:

Մինչև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների և 2018 թվականին ընդունված ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի գործողությունը, Հայաստանի Հանրապետությունում գործում էր ՀՀ Արդարադատության խորհուրդը:

2007 թվականին ընդունված ՀՀ դատական օրենսգրքի համաձայն՝ Արդարադատության խորհուրդը անկախ մարմին էր, որի հիմնական լիազորություններն էին դատավորների նշանակման, առաջխաղացման, պաշտոնից ազատման, ինչպեսնաև դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշումների կայացումը:

ՀՀ սահմանադրության բարեփոխումներին զուգահեռ իրականացվող Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով (տեքստում նաև՝ Ռազմավարական ծրագիր) նախատեսվել էին, մասնավորապես, բարեփոխել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն ու ընթացակարգերը, մասնավորապես՝ հստակեցնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը՝ հնարավորինս բացահայտելով նյութական և դատավարական օրենքների ակնհայտ և կոպիտ խախտումների բովանդակությունը, տարանջատել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ

հարուցող և կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտներին, ուսումնասիրել հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի անկախության և պաշտպանվածության օրենսդրական երաշխիքների ամրապնդման հարցը, Արդարադատության խորհրդի նիստերի դռնբացության խնդիրը՝ ըստ անհրաժեշտության նախատեսելով օրենսդրական փոփոխություններ, ապահովել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը: Ի կատարումն Ռազմավարական ծրագրի գործողությունների՝ 2014 թվականի հունիսի 10-ի ՀՕ-47-Ն և 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-86-Ն օրենքներով ՀՀ դատական օրենսգրքում կատարվեցին փոփոխություններ և լրացումներ:

2015թ. Սահմանադրության փոփոխություններով ստեղծված Բարձրագույն դատական խորհրդի առաքելությունն է երաշխավորել դատարանների և դատավորների անկախությունը: Այն, ի թիվս այլ լիազորությունների, որոնք ապահովում են դատական իշխանության ինքնակառավարման մարմնի՝ դատավորների նշանակման, առաջխաղացման, պաշտոնից ազատելու գործառույթները, օժտված է նաևդատավորներին կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությամբ:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել դատավորներին կարգապահական պատասխանատվության վերաբերյալԱրդարադատության խորհրդի կողմիցկայացված որոշումները, վեր հանել գոյություն ունեցող ինչպես օրենսդրական, այնպես էլ պրակտիկ խնդիրները:

Հետազոտության կարևորությունն ընդգծվում է նրանով, որ նշված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները կարևոր կլինեն ինչպես օրենսդրական փոփոխությունների, այնպես էլ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների առնչությամբ որոշում կայացնելու գործառույթի պրակտիկ իրականացման համար:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրականացված հետազոտության կարևորագույն նպատակն է առավելագույնս օբյեկտիվորեն և ամբողջականորեն ներկայացնել դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության քաղաքականության բնութագրիչները, ինչ նպատակով ընտրվել են 2012-2017 թվականների ընթացքում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունների քննության վերաբերյալ Արդարադատության խորհրդի կայացված բոլոր որոշումները:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են Արդարադատության խորհրդի 49 որոշումներ, որոնք դուրս են բերվել Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական www.court.am կայքից:

Ուսումնասիրության համար օգտագործվել են վերլուծության քանակական և որակական մեթոդներ: Որոշումներից դուրս բերված տվյալները լրացվել են Excel ծրագրով ստեղծված կիսաձևայնացված

հարցաշարում՝ բաղկացած մի շարք թեմատիկ բաժիններից: Հարցաշարի ձևայնացված հատվածներում տվյալները մուտքագրվել են նախօրոք մշակված կոդերով: Կիսաձևայնացված հատվածներում որոշումներից դուրս են բերվել տեքստային բնույթի ամբողջական մեջբերումներ:Որոշումները բաժանվել են՝ ըստ տարեթվերի, այնուհետև ըստ կարգապահական պատասխանատվություն կիրառելու համար հիմք հանդիսացած առավել հաճախ հանդիպող գործողությունների կրկնությունների: Խախտումների տարածվածությունը հասկանալու համար իրականացվել է նաև դրանց աշխարհագրական բաշխվածության ուսումնասիրություն՝ ըստ դատարանների: Ուսումնասիրությամբ իրականացվել է դուրս բերված տեղեկությունների համադրում՝ քանակական տվյալներ ստանալու նպատակով:

- Որոշման կայացման ամսաթիվ
- Դատավոր
- Դատարան
- Կարգապահական վարույթ հարուցելու առիթը
- Կարգապահական վարույթ հարուցող մարմինը
- Կարգապահական վարույթ հարուցելու հիմքը
- Դատավորի մասնակցությունը նիստին
- Վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները
- և այլն:

Տեքստային բնույթի տեղեկությունները ենթարկվել են որակական վերլուծության՝ ըստ դատավորի կողմից կարգապահական խախտում դիտարկված կամ չդիտարկված գործողության նկարագրության, յուրաքանչյուր խախտման վերաբերյալ դատավորի բացատրության, կարգապահական խախտման վերաբերյալ ՀՀ արդարադատության խորհրդի կողմից տրված գնահատականի:

Հարուցված կարգապահական վարույթների և որոշումների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ

2012-2017 թվականների ընթացքում ՀՀ Արդարադատության խորհրդի կողմից կայացվել են ընդհանուր առմամբ 49 որոշումներ: Ուսումնասիրված որոշումներից 38-ը եղել են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, իսկ 11-ը կարգապահական վարույթը կարճելու վերաբերյալ:

Աղյուսակ. Կայացված որոշումների թիվը՝ ըստ տարեթվերի

Տարեթիվը	Կայացված որոշումների թիվը
2012	16
2013	13
2014	5
2015	9
2016	4
2017	2
Ընդհանուր	49

Ինչպես երևում է աղյուսակից, առավել մեծ թվով որոշումներ կայացվել են 2012 թ. և 2013 թ.: 2012-2018 թվականների ընթացքում առավել թվով կարգապահական վարույթներ հարուցվել են Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորների նկատմամբ՝ 5 վարույթ: Ընդ որում, դրանք հարուցվել են 2012-2013 թվականներին: Չորսական կարգապահական վարույթներ հարուցվել են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների և Էրեբունի ու Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների, ինչպես նաև Լոռու մարզի, Կոտայքի մարզի և Արարատի ու Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատավորների նկատմամբ: Ընդ որոշում, Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների վերաբերյալ Արդարադատության խորհրդի երեք որոշումներ կայացվել են միայն 2015թվականին: Երկու դեպքում դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել է նույն հիմքով՝ մեղադրյալի կամ կասկածյալի դատավարական կարգավիճակ չունեցող անձի բանկային գաղտնիք հանդիսացող տվյալներին վարույթն իրականացնող մարմնին հասանելիություն տալուն:

Աղյուսակ. Որոշումների բաշխվածությունը՝ ըստ դատարանների և ըստ տարեթվերի

Տարեթիվ/դատարան	2012	2013	2014	2015	2016	2017	Ընդհանուր
Ավան և Նոր Նորք Մարաշ	1	1				1	3

վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան							
Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան		1		1	1	1	4
Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	1		1				2
Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	2	2					4
Շենգավիթի վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան		2		1			3
Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան	2	3					5
Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան			1				1
Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան	1						1
Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան				2	2		4
Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան	2						2
Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան	1			3			4
Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	1	1	2				4
Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան			1				1
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան	2	1					3
Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան	1			1			2
Գեղարքունիքի մարզի		1		1			2

ընդհանուր իրավասության դատարան							
Վերաքննիչ դատարան	2	1			1		4
Ընդհանուր	**16**	**13**	**5**	**9**	**4**	**2**	**49**

Վերաքննիչ դատարանների դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթներից երեքը վերաբերել են ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներին, մեկը՝ 2012թվականին հարուցված է եղել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորների նկատմամբ:

Հատկանշական է, որ ՀՀ վարչական դատարանի, ինչպես նաև վճռաբեկ դատարանի դատավորներից որևէ մեկի նկատմամբ կարգապահական վարույթ երբևէ չի հարուցվել:

Կարգապահական վարույթ հարուցելու առիթները

ՀՀ նախկին դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝

- Անձի դիմումը,
- Պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի հաղորդումը,
- Դատական պրակտիկայի ամփոփման կամ ուսումնասիրման արդյունքներով կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի հայտնաբերումը,
- Վարույթ հարուցող անձանց կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի ինքնուրույն հայտնաբերումը:

Մինչև ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2014 թվականի հունիսի 10-ի ՀՕ-47-Ն և 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-86-Ն օրենքների ընդունումը որպես դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ հանդիսացել են նաև՝ «վճռաբեկ դատարանի որոշումը, որով հաստատվել է, որ արդարադատություն իրականացնելիս գործը կամ հարցը ըստ էության լուծելիս կայացվել է ակնհայտ ապօրինի դատական ակտ, կամ արդարադատություն իրականացնելիս դատավորը թույլ է տվել դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում» և «դատարանների նախագահների էթիկայի հանձնաժողովի միջնորդությունը»:

Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ որպես դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներ նշվել են՝

1. Ֆիզիկական կամ իրավաբանական անձի դիմումը՝ 15 դեպքում
2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի հաղորդումը՝ 16 վարույթներ,
3. Դատական պրակտիկայի ամփոփման կամ ուսումնասիրման արդյունքներով կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի հայտնաբերումը՝ 7վարույթներ,

4. Վարույթ հարուցող անձանց կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի ինքնուրույն հայտնաբերումը՝ 6 վարույթներ,
5. Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությունը՝ 7 վարույթներ (մինչև 2014թ. հունիսի 10-ի ՀՕ-47-Ն օրենքով ՀՀ դատական օրենսգրքով համապատասխան փոփոխության կատարումը):

Վարույթ հարուցելու առիթը/Տարեթիվը	Անձի դիմումը	Պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի հաղորդումը	Դատական պրակտիկայի ամփոփման կամ ուսումնասիրման արդյունքներով կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի հայտնաբերումը	Վարույթ հարուցող անձանց կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի ինքնուրույն հայտնաբերումը	Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությունը
2012	2	11	-	3	-
2013	2	4	-	-	7
2014	5	-	-	1	-
2015	2	-	7	1	-
2016	3	1	-	-	-
2017	1	-	-	1	-
Ընդհանուր	**15**	**16**	**7**	**6**	**7**

Ընդ որում, երկու վարույթներ հարուցվել են միաժամանակ երկու առիթների հիման վրա: Մասնավորապես, Արդարադատության խորհրդի 2015 թվականի հունիսի 26-ի ԱԽ-20-Ո-22 և 2014 թվականաի սեպտեմբերի 14-ի ԱԽ-8-Ո-16 որոշումներով կարգապահական վարույթ հարուցելու առիթ հանդիսացել են համապատասխանաբար անձի դիմումը, ինչպես նաև համապատասխանաբար դատական պրակտիկայի ամփոփման կամ ուսումնասիրման արդյունքներով կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի հայտնաբերումը և վարույթ հարուցող անձանց կողմից կարգապահականպատասխանատվության հիմք հանդիսացող արարքի ինքնուրույն հայտնաբերումը:

Անհրաժեշտ է նկատել, որ որպես պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի հաղորդում՝ որպես կարգապահական վարույթ հարուցելու առիթ հանդիսացել են 14 վարույթների դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի գրությունը, որոնցից 11 վարույթներ (15 դատավորի առնչությամբ) վերաբերել են 2012թ. կարգապահական պատասխանատվության ենթարկված դատավորներին միայն, մեկ վարույթի դեպքում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և մեկ վարույթ՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահի հաղորդումը:

Կարգապահական վարույթ հարուցող մարմինները

ՀՀ նախկին դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեին՝

1. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորի և դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն
   1) Արդարադատության նախարարը,
   2) Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը:
2. Վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և պալատի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն՝
   1) Վճռաբեկ դատարանի նախագահը,
   2) Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը՝ Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությամբ:
3. Վճռաբեկ դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունի արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությամբ:

Միջազգային չափանիշների, և հատկապես Վենետիկյան հանձնաժողովի կողմից արտահայտած դիրքորոշման համաձայն՝ դատավորների կարգապահությանն առնչվող հարցերով որոշումներ կայացնող մարմինները չպետք է կարգապահական վարույթներ հարուցելու իրավունք ունենան: Ավելին, դրանց կազմում չպետք է լինեն այնպիսի անդամներ, ովքեր օժտված լինեն կարգապահական վարույթներ հարուցելու իրավասությամբ:

Վենետիկյան հանձնաժողովի կարծիքով՝ դատարանի նախագահի իրավասությունը հարուցելու կարգապահական վարույթ դատավորների նկատմամբ կարող է հանգեցնել դատավորի անկախության խաթարման, օրինակ՝ դատարանի նախագահի հետ կոնֆլիկտի:

Ինչպես վերը նշվեց, Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսվել էր «տարանջատել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և կարգապահական տույժի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտներին՝ որպես կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտներ նախատեսելով արդարադատության նախարարին ու դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և պալատի նախագահի նկատմամբ՝ վճռաբեկ դատարանի նախագահին, իսկ էթիկայի կանոնների խախտման հիմքով՝ նաև դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին»:

Ռազմավարական ծրագրով հիմնավորվում էր, որ մեկ մարմնի ձեռքում կարգապահական վարույթի հարուցման և դրա արդյունքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունների կենտրոնացումն էականորեն նվազեցնում է այդ վարույթի օբյեկտիվությունը և արդարությունը: Հետևաբար՝ այդ լիազորությունների արդյունավետ իրականացման համար դրանցով

պետք է օժտված լինեն տարբեր մարմիններ, ինչը ներկայիս կարգավորման համեմատ կապահովի առավել արդար կարգապահական ընթացակարգ:Ծրագրով նախատեսվել է նաև բացառել վճռաբեկ դատարանի գերակա դերը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում: (…) Վճռաբեկ դատարանը չպետք է օժտված լինի կարգապահական վարույթի ընթացքի վրա ներգործելու որևէ լիազորությամբ, քանի որ դա անհամատեղելի է վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի հետ:

2014 թվականի հունիսի 10-ին «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի փոխարեն դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությամբ օժտվեց Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, ինչը, ըստ էության, ապահովում էր վարույթ հարուցելու և տույժ նշանակելու իրավասություն ունեցող մարմինների տարանջատման սկզբունքը:

Վենետիկյան հանձնաժողովն արձանագրել է, որ միայն դատավորներից կազմված էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դեպքում առկա է դրա կողմից կորպորատիստ շահեր հետապնդելու վտանգը, այդ վտանգը նվազեցնելու մի տարբերակը արդարադատության նախարարի կողմից վարույթ հարուցելու իրավասությունն է, որը կարող է հավասարակշռել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին[1]:

Ուսումնասիրված գործերով դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներըհարուցվել են հետևյալ մարմինների կողմից՝

1. Արդարադատության նախարարի կողմից - 16վարույթներ
2. Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից- 23վարույթներ (մինչև 2014թ. հունիսի 10-ի ՀՕ-47-Ն օրենքի ընդունումը)
3. Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը –10 վարույթներ

Աղյուսակ. Կարգապահական վարույթ հարուցող մարմինը՝ ըստ տարեթվերի

Տարեթվերը/Կարգապահական վարույթը հարուցող մարմինը	**Արդարադատության նախարար**	**Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողով**	**Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով**
2012	4	12	
2013	2	11	
2014	5		
2015	2		7
2016	2		2
2017	1		1

[1]Վենետիկյան հանձնաժողով, Հայաստանի դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ կարծիք, թիվ 893/2017, CDL-AD(2017)019, կետ 135:

Ընդհանուր	16	23	10

Ինչպես տեսնում ենք, 2014 թվականից հետո գրանցվել է հարուցված կարգապահական վարույթների թվաքանակի կտրուկ անկում, ինչը կարող էր պայմանավորված լինել կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմնի փոփոխմամբ: Մասնավորապես, ինչպես վերը նշվեց, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից վարույթների հարուցման հարցում կորպորատիվիզմի դրսևորմամբ:

Մյուս կողմից 2012-2013 թվականների ընթացքում Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցված կարգապահական վարույթների քանակը կարող էր պայմանավորված լինել դրանց առիթներով՝ այն է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի հաղորդումներն ու ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությունները, որոնցով Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը կարող էր կաշկանդված լինել:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը

ՀՀ նախկին դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը՝

1) *Արդարադատություն իրականացնելիս նյութական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը,*
2) *Արդարադատություն իրականացնելիս դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը,*
3) *Աշխատանքային կարգապահությունը պարբերաբար կամ կոպիտ խախտելը,*
4) *Դատավորի կողմից վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերական խախտում թույլ տալը,*
5) *Դատավորի կողմից օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու և փորձաշրջանի ղեկավարի իր համար սահմանված պարտականությունները չկատարելը,*
6) *Դատավորի կողմից սույն օրենսգրքի 12-րդ հոդվածով, 72-րդ հոդվածով, 105-րդ հոդվածի 2-րդ մասով, 156-րդ հոդվածի 3-րդ մասով, 159-րդ հոդվածի 3-րդ մասով, 167-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու և փորձաշրջանի ղեկավարի իր համար սահմանված պարտականությունները չկատարելը:*

ՀՀ նախագահի կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսվել էր՝

3.4. բարեփոխել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը և հիմքերը՝ կարգապահական վարույթի օբյեկտիվության, արդարության, արդյունավետության և հրապարակայնության երաշխավորմամբ[2]:

Տվյալ նպատակի շրջանակներում նախատեսվում էր՝

3.4.4. հստակեցնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը՝ հնարավորինս բացահայտելով նյութական և դատավարական օրենքների ակնհայտ և կոպիտ խախտումների բովանդակությունը:

Ի կատարումն ծրագրի վերոգրյալ դրույթների՝ 2014թվականի հունիսի 21-ին ընդունվեց ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը[3]:

Ըստ կատարված փոփոխությունների՝ ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվեցին դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետևյալ հիմքերը՝

1) *Արդարադատություն իրականացնելիս նյութական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ,*
2) *Արդարադատություն իրականացնելիս դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ,*
3) *Դատավորի կողմից վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերական խախտումը,*
4) *Դատավորի կողմից սույն օրենսգրքի 12-րդ հոդվածով, 105-րդ հոդվածի 2-րդ մասով, 156-րդ հոդվածի 3-րդ մասով, 159-րդ հոդվածի 3-րդ մասով, 167-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու և փորձաշրջանի ղեկավարի իր համար սահմանված պարտականությունները չկատարելը,*
5) *Սույն օրենսգրքով սահմանված կարգով էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը միջամտելու կամ օրենքով չնախատեսված այլ ներգործության մասին չհայտնելը:*

Միաժամանակ, ՀՀ դատական օրենսգիրքը լրացվեց 153.2-րդ հոդվածով, որով փորձ էր արվում որոշակիացնել «նյութական և դատավարական նորմերի կոպիտ և ակնհայտ խախտում» հասկացությունները: Մասնավորապես, ըստ Դատական օրենսգրքի 153.2-րդ հոդվածի՝

[2] ՀՀ Նախագահի կարգադրությունը ՀՀ Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկըհաստատելումասին, 30.06.2012, կետ 3.4, հասանելիէhttps://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76932 :
[3] ՀՀ օրենքը ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ՀՕ-86-Ն, 21.06.2014թ.https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91459

1. *սույն գլխի իմաստով ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:*
2. *Կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որը հեղինակազրկում է արդարադատությունը կամ անհամատեղելի է դատավորի բարձր կոչման հետ:*
3. *Կոպիտ է նաև պարբերական կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակազրկում է արդարադատությունը կամ դատավորի բարձր կոչումը:*

Նույն հոդվածով տրվել էր նաև կարգապահական խախտման մեղքի տեսակների հասկացությունը: Մասնավորապես, նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը համարվում էր կատարված չարամտությամբ, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, իսկ նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը համարվում էր կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի կանխատեսել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

Միաժամանակ, նույն հոդվածի 6-րդ մասով արձանագրվել էր, որ արդարադատություն իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

ՀՀ արդարադատության խորհուրդը նյութական կամ դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտման հասկացության վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելիս, արձանագրել էր, որ «*օրենքի նորմերի կոպիտ և ակնհայտ խախտումներ են արդարադատության իրականացման ընթացքում ՀՀ սահմանադրությամբ, օրենքների նորմերի այնպիսի էական խախտումները, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, դրանցից զրկելուն, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը խոչընդոտելուն և ազդել են կամ կարող էն ազդել գործով ճիշտ և օրինական որոշման կայացմանը*» (Արդարադատության խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 12-ի ԱԽ-7-Ո-18 որոշում):

Մեկ այլ որոշմամբ Արդարադատության խորհուրդն արձանագրել էր, որ «… *դատավորին վերագրվող խախտումը չի կարող համարվել ակնհայտ և կոպիտ, եթե այն չի պարունակում ՀՀ Սահմանադրության կամ օրենքների նորմերի այնպիսի էական, անվիճելի և անհերքելի խախտումներ, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, չհիմնավորված և չպատճառաբանված որոշման կայացմանը: Հետևաբար այն չի կարող նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ*» (Արդարադատության խորհրդի 2014թ. ապրիլի 4-ի ԱԽ-7-Ո-3 որոշում):

Անհրաժեշտ է փաստել, որ Արդարադատության խորհրդի՝ մինչև 2014 թվականի օրենսդրական փոփոխությունները տրված հասկացությունները կիրառվել են Արդարադատության խորհրդի կողմից նաև ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելուց հետո կայացված որոշումներում (տես օրինակ՝ Արդարադատության խորհրդի 2016թ. մայիսի 13-ի ԱԽ-9-Ո-9 որոշումը):

Նյութական և դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտմանը Արդարադատության խորհրդի կողմից տրված վերոգրյալ մեկնաբանություններն անհստակ և հակասական են: Մասնավորապես, եթե թիվ ԱԽ-7-Ո-18 (2007թ.) որոշմամբ որպես կոպիտ և ակնհայտ խախտումներ որակվել են «*այնպիսի **էական խախտումները,** որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցրել*(…)***իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, դրանցից զրկելուն, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը խոչընդոտելուն և ազդել են կամ կարող են ազդել գործով ճիշտ և օրինական որոշման կայացման***», ապա մյուս՝ ԱԽ-7-Ո-3 (2014թ.) որոշմամբ «***այնպիսի էական, անվիճելի և անհերքելի խախտումներ***, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով ***երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, չհիմնավորված և չպատճառաբանված որոշման կայացմանը»***:

Նման պայմաններում, Արդարադատության խորհրդի կողմից, ըստ էության, կիրառվել են անհստակ և երկակի չափանիշներ դատավորների արարքը որակելու և գնահատելու համար:

Ավելին, նյութական և դատավարական օրենքի նորմերի կոպիտ և ակնհայտ խախտմանը տրված նման մեկնաբանության պայմաններում Արդարադատության խորհուրդն ստանձնել է վերադաս ատյանի դեր, որպիսի պայմաններում գնահատել է դատավորի կայացրած որոշումը, օրենսդրական կարգավորումներին և փաստերին դատավորի կողմից տրված գնահատականն ու մեկնաբանությունը, դատական ակտի պատճառաբանվածությունը և այլն, ինչը կարող է իրականացվել միայն վերադաս դատական ատյանի կողմից դատական ակտի բողոքարկման արդյունքում:

Այս առթիվ Վենետիկյան հանձնաժողովը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում առանձնակի կարևորել է պատասխանատվության ենթարկելու հիմքերի <u>*հստակության հարցը*</u>[4]: Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ իր կարծիքում, Վենետիկյան հանձնաժողովն արձանագրել է, որ «(…) կարգապահական պատասխանատվության հանգեցնող արարքը պետք է ձևակերպված լինի բավարար հստակությամբ, որպեսզի հնարավորություն տա անձին կանխատեսելու իր արարքների հետևանքները և հետևաբար՝ կարգավորելու դրանք: Կարգապահական պատասխանատվության հիմքերի առավել մանրամասն նկարագրությունը նաև կնպաստի դրանց սուբյեկտիվ և հայեցողական կիրառման սահմանափակմանը»:

Օրինակ, Վենետիկյան հանձնաժողովը եզրահանգել է, որ «գործի քննության ընթացքում օրենքի կոպիտ խախտում կամ կրկնվող խախտում» սահմանելը բավարար հստակ չէ[5]: Նույն կերպ, մեկ այլ

[4]Վենետիկյան հանձնաժողով, Հայաստանի դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ կարծիք, թիվ 893/2017, CDL-AD(2017)019, կետ 65:
[5]Վենետիկյան հանձնաժողով, Ընդհանուր իրավասության դատարանների դատավորների կարգապահական պատասխանատվության մասին Վրաստանի օրենքի մեկնաբանություններ, թիվ 406/2006, CDL(2007)020

կարծիքում, արձանագրել է, որ «դատարանի հեղինակությունը և դատական և դատավորի պաշտոնը արժեզրկելը» չափազանց լայն եզրույթ է[6]:

Ավելին, Վենետիկյան հանձնաժողովը, անդրադառնալով ՀՀ դատական օրենսգրքում փոփոխությունների և լրացումների նախագծին և մասնավորապես 153.2-րդ հոդվածի կարգավորումներին և ակնհայտ խախտման բնորոշմանը՝ որպես «նյութական և դատավարական նորմի այնպիսի խախտում, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով» նշել է, որ նշաձողը շատ բարձր է: Միաժամանակ, նշել է, որ գերադասելի է, որ նման հարցերի մեծամասնությունը վերադաս բողոքարկման ենթարկվեն, քան դիտարկվեն որպես դատավորի կողմից կարգապահական խախտման հիմք: Վենետիկյան հանձնաժողովի կարծիքով, չնայած ակնհայտ և կոպիտ խախտումը սահմանափակում է եզրույթը, սակայն տվյալ կարգապահական խախտումը չպետք է մեկնաբանել այնպես, որ այն ներառի օրենքի պատճառաբանված մեկնաբանությունը, նույնիսկ եթե այն հակասում է բարձր ատյանների կողմից ձևավորված նախադեպերին[7]:

Դատական օրենսգրքով նախատեսված վարքագծի կանոնների խախտումը չպետք է ինքնին կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսանա և կարգապահական գործընթացը պետք է նախաձեռնվի հատուկ կարգապահական խախտման հիմքով[8]:

Այսպես, ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման հիմքերը եղել են՝

- Նյութական իրավունքի կոպիտ և ակնհայտ խախտումը 26 դեպքերում: Ընդ որում՝ 14 որոշումներում որպես դատավոր մեղքի ձև նշվել է կոպիտ անփութությունը, 12 դեպքում՝ մեղքի որևէ ձև չի նշվել ոչ վարույթ հարուցող մարմնի կողմից, ոչ՝ ԱԽ-ի կողմից:
- Դատավարական իրավունքի կոպիտ և ակնհայտ խախտումը 36 դեպքում: Ընդ որոշում՝ 26 որոշումներում որպես դատավորի մեղքի ձև նշվել է կոպիտ անփութությունը, 10 դեպքերում՝ մեղքի որևէ ձև չի նշվել ոչ վարույթ հարուցող մարմնի կողմից, ոչ՝ ԱԽ-ի կողմից:
- Վարքագծի կանոնների խախտումը՝ 11 դեպքում: Դրանցից 8 դեպքում խախտումը եղել է կոպիտ,1-ում՝ պարբերական, 2 դեպքում խախտման ձևը չի արձանագրվել:

Օրենքով նախատեսված այլ հիմքերով՝ օրենքով նախատեսված վերապատրաստումներ չանցնելը, փորձաշրջանի ղեկավարի պարտականությունները չկատարելը, իր գործունեությանը միջամտելու կամ օրենքով չնախատեսված այլ ներգործության մասին չհայտնելը, կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

[6]Վենետիկյան հանձնաժողով, Հայաստանի դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ կարծիք, թիվ 893/2017, CDL-AD(2017)019, կետ 65:
[7]Վենետիկյան հանձնաժողով, Հայաստանի դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ կարծիք, CDL-AD(2014)007, կետեր 114-115:
[8]Նույնտ եղում, կետ 117:

Աղյուսակ. Կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը՝ ըստ տարիների

Տարեթիվ/Կարգապահական վարույթի հիմք	Նյութական օրենքի նորմի կոպիտ և ակնհայտ խախտում	Դատավարական օրենքի նորմի կոպիտ և ակնհայտ խախտում	Վարքագծի կանոնների խախտում
2012	12	9	1
2013	2	9	8
2014	2	5	-
2015	7	8	1
2016	1	3	1
2017	2	2	-
Ընդամենը	**26**	**36**	**11**

Անհրաժեշտ է նշել, որ 20 վարույթներ հարուցված են եղել միաժամանակ նյութական և դատավարական նորմերի կոպիտ և ակնհայտ խախտում կատարած լինելու հիմքով:

Երեք վարույթներով դատավորի կողմից թույլ տրված դատավարական օրենքի կոպիտ և ակնհայտ խախտումը գնահատվել է նաև որպես վարքագծի կանոնների խախտում: Օրինակ, դատավորի կողմից ողջամիտ ժամկետների պահպանման պահանջների խախտումը մի դեպքում (երբ գործի քննության ողջամիտ ժամկետի խախտում գրանցվել է մեկ գործի շրջանակներում) գնահատվել է միայն դատավորի վարքագծի կանոնների խախտում, մեկ այլ դեպքում՝ ինչպես վարքագծի կանոնների խախտում, այնպես էլ դատավարական օրենքի նորմի խախտում:

Մասնավորապես, Արդարադատության խորհրդի 2013 թվականի հունվարի 31-ի ԱԽ-4-Ո-7 որոշմամբ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել էր այն հիմնավորմամբ, որ դատավորի կողմից «*քրեական գործով չեն ձեռնարկվել բավարար և անհրաժեշտ միջոցներ՝ գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու համար, այլ խոսքով՝ դատավորի կողմից գործի քննության ընթացքում թույլ են տրվել օրենքներով և Վարքագծի կանոններով սահմանված՝ գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման պահանջների էական խախտումներ: (…)Կարգապահական հանձնաժողովը գտնում է, որ վարքագծի կանոնների կոպիտ կամ պարբերաբար խախտումը չի կարող թույլ տրվել դատավորի մեղքի բացակայությամբ: Տվյալ պարագայում դատավորի մեղավորությունն առկա է, քանի որ նա արդյունավետ և ողջամիտ ժամկետներում չի կազմակերպել իր վարույթում գտնվող դատական գործի քննությունը, ինչի արդյունքում թույլ է տվել* ***վարքագծի կանոնների կոպիտ խախտում***»:

Մինչդեռ, Արդարադատության խորհրդի 2013 թվականի հունվարի 31-ի ԱԽ-4-Ո-8 որոշմամբ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել էր այն հիմնավորմամբ, որ «քաղաքացիական գործերով թույլ է տվել օրենքներով և վարքագծի կանոններով սահմանված գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման էական խախտումներ: (…) Կարգապահական հանձնաժողովը գտնում է,որ դատավորն արդյունավետ և ողջամիտ ժամկետներում չի կազմակերպել իր աշխատանքը, չի դրսևորել բավարար ուշադրություն և շրջահայացություն, որի արդյունքում չեն պահպանվել արդարության և

օրինականության սկզբունքները, և թույլ են տրվել ***վարքագծի կանոնների***, ինչպես նաև ***դատավարական օրենքի նորմերի ակնհայտ խախտում***:

Անհրաժեշտ է փաստել նաև, որ երկու դեպքում էլ դատավորները կարգապահական պատասխանատվության են ենթարկվել դատավարական օրենքի կոպիտ և ակնհայտ խախտման, ինչպես նաև վարքագծի կանոնի կոպիտ խախտման համար: Այսինքն, դատավորը կարգապահական պատասխանատվության ենթարկվել է մի հիմքով, որով կարգապահական վարույթ հարուցված չի եղել:

Ըստ ուսումնասիրության արդյունքների դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը, ըստ տարիների բաշխվածության, կրկնվել են: Առավելագույն թվով կարգապահական վարույթներ հարուցված են եղել հետևյալ հիմքերով՝

Համաներման ակտի սխալ կիրառմանը վերաբերել են 9 կարգապահական վարույթներ: Բոլոր որոշումները կայացվել են 2012 թվականին և կարգապահական վարույթ հարուցելու առիթ են հանդիսացել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի հաղորդումը Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին:

Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթները հարուցված են եղել այն հիմնավորումներով, որ անձի նկատմամբ համաներման ակտը կիրառվել է՝ հաշվի չառնելով նույն ակտով նախատեսված բացառությունը, համաներումը կիրառվել է առանց դրա կիրառման հիմք հանդիսացող հանգամանքների հիմնավորման (չպատճառաբանված դատական ակտ), դատավորի կողմից կիրառվել է համաներում այն դեպքում, երբ դրա լիազորությունը վերապահված է եղել պատիժը կատարող մարմնին և այլն:

Կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չունեցող անձի բանկային գաղտնիք համարվող տվյալներին հասանելիություն տալուն վերաբերել են 4 կարգապահական վարույթներ, ընդ որում երկու դեպքում անձինք ունեցել են տուժողի կարգավիճակ, մյուս դեպքերում՝ անձինք դատավարական կարգավիճակ չեն ունեցել: Բոլոր վարույթները քննվել են 2015 թվականին՝ դատական պրակտիկայի ամփոփման հիման վրա:

Գործի քննության ողջամիտ ժամկետների խախտման հիմքով հարուցվել են կարգապահական վարույթներ 5 դատավորների նկատմամբ: Ընդ որում, բոլոր վարույթները քննվել են 2013 թվականին[9] և բոլոր վարույթների հարուցման առիթ են հանդիսացել ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի գրությունները՝ ուղղված Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին:

Դատավարական այլ ժամկետների խախտման հիմքով հարուցվել են 4 կարգապահական վարույթներ: Մասնավորապես՝ 2 կարգապահական վարույթ նույն դատավորի (Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Իշխան Բարսեղյան) նկատմամբ հարուցվել է մի քանի

[9]Տես, Արդարադատության խորհրդի 2013թ.հունվարի 31-իորոշումները ԱԽ-4-Ո-7, ԱԽ-4-Ո-8, ԱԽ-4-Ո-9, ԱԽ-4-Ո-10 և Արդարադատության խորհրդի 2013թ. փետրվարի 28-իԱԽ-7-Ո-12 որոշումները:

դատական գործերով դատական ակտերը կողմերին օրենքով սահմանված ժամկետից ուշ ուղարկելու համար[10], 1-ական կարգապահական վարույթներ հարուցվել են համապատասխանաբար հայցի ապահովման վերացման հարցի լուծման՝ օրենքով նախատեսված ժամկետների, ինչպես նաև ինքնաբացարկի միջնորդության քննության ու լուծման ժամկետների խախտման հիմքով:

Չպատճառաբանված դատական ակտ կայացնելու հիմքով հարուցվել են 6 կարգապահական վարույթներ:

Հայցի ապահովման միջոցի կիրառման խախտում– 4 վարույթ, այդ թվում՝ օրենքով չնախատեսված հայցի ապահովման միջոց կիրառելը, գործով պատասխանող չհանդիսացող անձի գույքի վրա արգելանք դնելը, ինչպես նաև հայցի ապահովման միջոց կիրառելը գործով համապատասխանողի միջնորդության հիման վրա: Կարգապահական վարույթներից չորրորդը վերաբերել է դատավորի կողմից հայցի ապահովում կիրառելու միջնորդությունը չքննարկելուն և դրա վերաբերյալ առանձին որոշում չկայացնելուն, այլ հարցը վճռով քննարկելուն ու բավարարելուն և վճռի հրապարակման հաջորդը օրը հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ կատարողական թերթ տալուն:

Կալանավորման կիրառման հետ կապված խնդիրներ- 3 վարույթներ: Ընդ որում, երկու կարգապահական վարույթներ վերաբերել են դատավորի կողմից անձի կալանքի ժամկետը երկարացնելուն այն դեպքում, երբ միջին ծանրության հանցագործությունների համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է առավելագույնը 6 ամիս ժամկետով կալանքավորելու հնարավորություն:

Ինքնաբացարկի հիմքերին վերաբերել են 3 վարույթներ, որոնցից երկուսն առնչվել են օրենքով չնախատեսված հիմքով դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու հիմքերին և դրանց պատճառաբանվածությանը: Վարույթներից մեկի հիմք է եղել դատավորի վարքագծի կանոնի խախտումը: Որպես այդպիսին է գնահատվել դատավորի կողմից ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման մեջ արված արտահայտությունը՝ «*նշվածը վերաբերում է հայցվորի հիվանդագին երևակայությանը*», ինչը գնահատվել է որպես հայցվորի նկատմամբ անբարեկիրթ վերաբերմունք և դատական իշխանության հեղինակությունը արատավորող:

Անհրաժեշտ է ընդգծել, որ դատավորի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ընդգրկել է ոչ միայն մեկ խախտում, այլ մի քանի խախտումներ: Մասնավորապես,

Կարգապահական խախտման քանակը	Վարույթի քանակը
4	3
3	3
2	13
1	30

[10]Տես, Արդարադատության խորհրդի 2013 թվականի ապրիլի 12-ի ԱԽ-12-Ո-20 և 2015 թվականի հունիսի 26-ի ԱԽ-20-Ո-22 որոշումները:

Արդար դատաքննության երաշխիքները կարգապահական պատասխանատվության ենթարկելու քննության վարույթի ընթացքում

Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսվում էր՝

3.4.2. Ուսումնասիրել հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի անկախության և պաշտպանվածության օրենսդրական երաշխիքների ամրապնդման հարցը:
3.4.3. Ուսումնասիրել Արդարադատության խորհրդի նիստերի դռնբացության խնդիրը՝ ըստ անհրաժեշտության նախատեսելով օրենսդրական փոփոխություններ:

ՀՀ նախկին դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը հարցը քննելիս Արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան: Որպես դատարան գործելլիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են ՀՀ վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին:
2. Արդարադատության խորհրդի անդամը չի կարող ինքնաբացարկ հայտնել:
3. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության ապացուցման պարտականությունը կրում է վարույթը հարուցած անձը: Արդարադատության խորհրդի նիստում դատավորի կողմից կատարված կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են դատավորի օգտին:
4. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը Արդարադատության խորհուրդը քննում է ողջամիտ ժամկետում:

Նույն օրենսգրքի 159-րդ հոդվածի համաձայն՝

1. Արդարադատության խորհրդում հարցի քննությունն սկսվում է հարցի էության և կարգապահական խախտման մասին եզրակացության վերաբերյալ վարույթ հարուցած անձի զեկուցմամբ:
2. (…)
3. Արդարադատության խորհրդում վարույթ հարուցած անձի զեկուցումից հետո խորհուրդը լսում է դատավորի բացատրությունները: Դատավորը բացատրություն է տալիս կարգապահական խախտման մասին եզրակացության մեջ արտացոլված յուրաքանչյուր խախտման վերաբերյալ: Նա կարող է ժխտել իր կողմից կարգապահական խախտում համարվող արարքի կատարման փաստը, վիճարկել արարքի որակումը՝ որպես կարգապահական խախտում, կամ վերոհիշյալ երկուսը միաժամանակ: Եթե դատավորը չի վիճարկում կարգապահական խախտման փաստի առկայությունը և համաձայնվում է տվյալ արարքի որակմանը՝ որպես կարգապահական խախտում, ապա Արդարադատության խորհուրդն անմիջապես անցնում է դատավորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հարցի քննարկմանը:

4. Եթե դատավորը վիճարկում է իր կողմից կարգապահական խախտում կատարելու փաստը, ապա նրա բացատրությունները լսելուց հետո Արդարադատության խորհուրդն անցնում է վարույթի նյութերի և ապացույցների հետազոտմանը:
5. Արդարադատության խորհուրդն իրավունք ունի նաև իր նախաձեռնությամբ նիստին հրավիրելու ու հարցաքննելու վկաների: Վկաների չներկայանալու դեպքում Արդարադատության խորհուրդն իրավունք ունի վկային բերման ենթարկելու մասին որոշում կայացնելու:
6. (…)
7. Գործի նյութերի ուսումնասիրությունից հետո Արդարադատության խորհուրդը լսում է նիստին մասնակցող անձանց եզրափակիչ ելույթները, որից հետո անցնում է խորհրդակցական սենյակ՝ որոշում կայացնելու համար:
8. Խորհրդակցական սենյակում նախ քվեարկության է դրվում արարքի կատարման մեջ դատավորի մեղավորության հարցը, ապա կարգապահական տույժի տեսակի վերաբերյալ հարցը:

ՀՀ նախկին դատական օրենսգրքի 160-րդ հոդվածը սահմանում էր դատավորի իրավունքներն ու պարտականությունները Արդարադատության խորհրդում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս: Ըստ դրա, մասնավորապես,

1. Դատավորն իրավունք ունի՝

    1) ծանոթանալու Արդարադատության խորհրդում հարցի քննության համար հիմք հանդիսացող նյութերին, քաղվածքներ անելու, ստանալու դրանց պատճենները,
    2) հարցեր տալու ելույթ ունեցողին, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու և միջնորդություններ անելու,
    3) ապացույցներ ներկայացնելու և մասնակցելու դրանց հետազոտմանը,
    4) մասնակցելու նիստին՝ հանդես գալով անձամբ կամ փաստաբանի միջոցով:
2. Դատավորի փաստաբանը բոլոր դեպքերում իրավունք ունի մասնակցելու Արդարադատության խորհրդում տվյալ դատավորի վերաբերյալ հարցի քննարկմանը և օգտվում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքներից:
3. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվելու դեպքում Արդարադատության խորհրդին բացատրություններ տալը նրա պարտականությունն է:
4. Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորն օգտվում է Սահմանադրության 19-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքներից:
5. Արդարադատության խորհրդի կանչին դատավորի անհարգելի չներկայանալու դեպքում Արդարադատության խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցն իրավունք ունի քննելու դատավորի բացակայությամբ:

Ուսումնասիրված բոլոր որոշումներում ներկայացված է եղել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցած մարմնի եզրակացությունը, ենթադրյալ խախտման արարքի նկարագիրն ու հիմնավորումները: Եզրակացություններից 39-ում ներկայացվել է դատավորի կողմից կարգապահական խախտման մեջ մեղքի առկայությունը, սակայն մեղքի տեսակը ներկայացվել է միայն 28 որոշումներում: Մնացյալ դեպքերում դատավորի մեղքին վերաբերող որևէ հիմնավորում չի ներկայացվել: Դատավորի

կողմից վարքագծի կանոնների խախտման պարագայում նշվել է միայն, որ «*վարքագծի կանոնի կոպիտ կամ պարբերական խախտումը չի կարող թույլ տրվել դատավորի մեղքի բացակայությամբ*»[11]:

- *Նիստի հրապարակայնությունը*

Ինչպես վերը նշվեց Ռազմավարական ծրագրով նախատեսվում էր ուսումնասիրել Արդարադատության խորհրդի նիստերի դռնբացության խնդիրը՝ ըստ անհրաժեշտության նախատեսելով օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի նախնական տեքստի 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «արդարադատության խորհրդի նիստերը դռնփակ են, բացառությամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործերի քննության այն դեպքերի, երբ դատավորը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պահանջում է իր գործի հրապարակային քննություն»:

ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքվի վերաբերյալ Վենետիկյան հանձնաժողովի կարծիքի համաձայն՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին առավել համահունչ կլինի, որ, որպես ընդհանուր կանոն, Արդարադատության խորհրդի նիստերը լինեն հրապարակային և անց կացվեն բռնփակ միայն բացառիկ դեպքերում՝ դատավորի համապատասխան միջնորդության հիման վրա[12]:

2014 թվականին ՀՀ դատական օրենսգրքի 109-րդ հոդվածում կատարվել էր փոփոխություն, ըստ որի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք Արդարադատության խորհրդի որոշմամբ անցկացվում են դռնփակ՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով:

Ուսումնասիրված որոշումների համաձայն՝ 42 նիստեր իրականացվել են *դռնփակ վարույթի շրջանակներում:* Մնացյալ 7 որոշումները վարույթի հրապարակայնության մասին նշում չեն պարունակում: Ընդ որում, տվյալ 7 որոշումները վերաբերում են 2015 թվականին կայացված նիստերին միայն:

Ավելին, որոշումները որևէ նշում չեն պարունակում, թե ինչ հիմքով է Արդարադատության խորհրդի նիստն իրականացվել դռնփակ, երբ օրենսդրությունը հստակ ամրագրում է, որ դրանք իրականացվում են դռնբաց՝ միայն որոշ բացառությունների դեպքում թույլատրելով դռնփակ նիստի անցկացումը:

- *Դատավորի մասնակցությունը Արդարադատության խորհրդի նիստին*

Ուսումնասիրված որոշումների համաձայն՝ 48 գործերով նիստերին դատավորները մասնակցել են: Միակ գործը, որով Արդարադատության խորհրդի նիստին դատավորը չի մասնակցել վերաբերել է

[11]Տես, օրինակ, Արդարադատության խորհրդի 2013 թվական հունվարի 31-ԻԱԽ-4-Ռ-9 որոշումը:

12Վենետիկյան հանձնաժողով, Հայաստանի դատական օրենսգրքում փոփոխություններևլրացում ներկատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ կարծիք, CDL-AD(2014)007, կետ 97:

դատավոր Ա. Մարանգուլյանին, ում լիազորություններն արդեն դադարեցված են եղել ՀՀ նախագահի հրամանագրով[13]:Միայն երկու դատավորներ են ներկայացված եղել փաստաբանի կողմից:

- *Դատավորի բացատրությունը*

Ուսումնասիրված բոլոր որոշումների համաձայն՝ դատավորները ներկայացրել են գրավոր բացատրություն վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմնին: Միայն մեկ դեպքում դատավորը իր բացատրությամբ չի անդրադարձել ենթադրյալ խախտումներից մեկին:

Դատավորների բացատրությունների վերլուծության արդյունքում փաստվում է, որ 17 դատավորներչեն վիճարկել խախտման փաստը: Դատավորների կողմից որպես խախտման պատճառ նշվել է աշխատանքային գերծանրաբեռնվածությունը:

Մնացյալ վարույթների շրջանակներում դատավորը վիճարկել է կարգապահական խախտման առկայությունը: Ընդ որում, 7 դեպքերում դատավորները փաստարկել են, որ իրենց կողմից թույլ տրված հնարավոր խախտումը չի կարող որակվել որպես կոպիտևակնհայտ, երեք վարույթներում դատավորները նշել են, որ իրենց կողմից իրականացված օրենքի մեկնաբանությունը չի կարող որակվել որպես օրենքի կոպիտ և ակնհայտ խախտում:

- *Վարույթի նյութերի և ապացույցների հետազոտումը*

Ուսումնասիրված բոլոր որոշումներում Արդարադատության խորհուրդը նշել է, որ իր կողմից *քննարկվել են վարույթ հարուցելու իրավասություն ունեցող անձի կամ մարմնի ներկայացուցչի զեկույցը, դատավորի բացատրությունը, ուսումնասիրվել են վարույթի նյութերը, հետազոտվել ապացույցները*, որոնք հիման վրա Խորհուրդը կայացրել է որոշումը:

Որևէ որոշում չի պարունակում նշում այն մասին, թե ինչ ապացույցներ են հետազոտվել Արդարադատության խորհրդի կողմից, անդրադարձ չի կատարվել դրանց վերաբերելիությանն ու թույլատրելիությանը որոշում կայացնելու համար:

- *Որոշման պատճառաբանվածությունը*

Դատավորի նկատմամբ հարուցված կարգապահական պատասխանատվությանեթնարկելու միջնորդությանքննության վերաբերյալ Արդարադատության խորհրդի որոշումը հիմնականում պարունակել է նյութական կամ դատավարական օրենքի նորմի վերաբերյալԱրդարադատության խորհրդի մեկնաբանությունը:

Դատավորի կողմից ենթադրյալ խախտումը կամ դրա բացակայությունը հիմնավորվել են հիմնական հետևյալ իրավական ակտերով, որոնք վերաբերելի են եղել կոնկրետ իրավահարաբերությանը՝

- Սահմանադրություն- 28 որոշումներում
- Օրենսգիրք[14] – 36 որոշումներում
- ՀՀ Ազգային ժողովի Օրենք և որոշում[15] -13 որոշումներում
- ՀՀ կառավարության որոշում - 8 որոշումներում

---

[13]Տես, Արդարադատության խորհրդի 2013 թվականի ապրիլի 12-ի ԱԽ-12-Ո-21 որոշումը:

[14]Որպես այդպիսին հիմնվել են ՀՀդատական օրենսգրքի, ՀՀքաղաքացիական օրենսգրքի, ՀՀ քրեական օրենսգրքի, ՀՀքաղաքացիական դատավարության օրենսգրքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների վրա:

[15]Կիրառվելեն իրավահարաբերությանը վերաբերելի օրենքներ, օրինակ, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀօրենքը, «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀԱԺ 2011թ.մայիսի 26-իորոշումը և այլն:

- ՀՀ սահմանադրական դատարանի որոշում – 12 որոշում
- ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում – 23 որոշում
- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթ և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ – 24 որոշում

Մի շարք որոշումների հիմնավորումները հիմնվել են Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականների դրույթներ, Բանգալորյան սկզբունքների դրույթներ, Արդարադատության խորհրդի՝ նախկինում կայացված որոշումների, Դատարանների նախագահների խորհրդի որոշումները և այլն:

- *Որոշման բողոքարկումը*

ՀՀ նախկին դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումները (…) ուժի մեջ են մտնում Արդարադատության խորհրդի նիստում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չեն:

ՀՀ օրենսդրական նման սահմանափակումը, ըստ էության, հանդիսանում էր դատավորի իրավունքների, մասնավորապես դատարանի հասանելիության իրավունքի խախտում:

Մինչդեռ, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելուն առնչվող միջազգային չափանիշների համաձայն՝կարգապահական պատասխանատվության և կիրառվող միջոցների բողոքարկման մեխանիզմներն ու ընթացակարգերը պետք է հստակ նախատեսված լինեն[16]: Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի վճռով ճանաչել է դիմումատուի՝ դատարանի հասանելիության իրավունքը, քանի որ հնարավորություն չի ունեցել բողոքարկել ՀՀ նախագահի հրամանագիրը իր լիազորությունները որպես դատավոր դադարեցնելու վերաբերյալ[17]:

Ավելին, Վենետիկյան հանձնաժողովը իր մտահոգությունն է հայտնել ՀՀ-ում դատավորին կարգապահական պատախասնատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման հնարավորության բացակայության մասին: Իր կարծիքներում Վենետիկյան հանձնաժողովը խորհուրդ է տվել նախատեսել անկախ դատարանում կարգապահական պատասխանատվության բողոքարկման հնարավորություն[18]: ԵԽ նախարարների կոմիտեի (2010)12 հանձնարարականը պահանջում է, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթները պետք է իրականացվեն անկախ մարմնի կամ դատարանի կողմից՝ արդար դատաքննության բոլոր երաշխիքներով և պետք է նախատեսեն դատավորի իրավունքը վիճարկելու որոշումը կամ տույժի միջոցը: Կիևյան հանձնարարականընևս նշում է, որ դատավորը պետք է ունենա իրավունք կարագապահական մարմնի որոշումը բողոքարկելու իրավասու դատարանին:

[16] Preliminary opinion on the Draft Law on Amending the law on the Judicial system and the status of judges of Ukraine, no 792/2015
[17]ՄԻԵԴ, Սաղաթելյանն ընդդեմՀայաստանի (Saghatelyan v. Armenia), no. 7984/06, վճիռ 20.10.2015, կետեր 48-50:
[18]Վենետիկյան հանձնաժողով, Հայաստանի դատական օրենսգրք ինախագծի վերաբերյալ կարծիք, թիվ 893/2017, CDL-AD(2017)019, կետ 146:

Արդարադատության խորհրդի որոշումները

ՀՀ նախկին դատական օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեկ կարգապահական վարույթի քննության շրջանակներում, անգամ եթե նույն դատավորը կատարել է մի քանի կարգապահական խախտում, Արդարադատության խորհուրդը կայացնում է մեկ որոշում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննության արդյունքում Արդարադատության խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը՝

1. Դատավորին սույն օրենսգրքով նախատեսված կարգապահական տույժի ենթարկելու մասին,
2. Գործը կարճելու մասին:

Ուսումնասիրված 49 որոշումներից 38-ով Արդարադատության խորհրդի կողմից կայացվել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում:

Աղյուսակ. Արդարադատության խորհրդի կողմից կայացված որոշումներով արձանագրված խախտումները՝ թվերով.

Խախտման տեսակը	Որոշումների քանակը
Նյութական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտխախտում	9
Դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում	11
Նյութական և դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում	9
Դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում և վարքագծի կանոնի խախտում	5
Նյութական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում վարքագծի կանոնի խախտում	1
Վարքագծի կանոնի խախտում	2

Վերոգրյալ 38 որոշումները ներառում են նաև այն որոշումները, երբ մի քանի խախտման հիմքով հարուցված լինելու դեպքում դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության առնվազն մեկ խախտման հիմքով:

Օրինակ, Արդարադատության խորհրդի 2015 թվականի ԱԽ-20-Ո-21 որոշմամբ կարգապահական խախտումներից մեկի առնչությամբ չփարատված կասկածները մեկնաբանվել են հօգուտ դատավորի, որի պայմաններում խախտման այդ հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժվել է:

Մեկ այլ՝ Արդարադատության խորհրդի 2015 թվականի ԱԽ-11-Ո-14 որոշմամբ ԱԽ կողմից հաստատվել է, որ խախտման հիմքը եղել է օրենքի դրույթի վերաբերյալ արված մեկնաբանությունը, որը չի կարող դիտարկվել որպես նյութական իրավունքի ակնհայտ և կոպիտ խախտում:

Այսպես, նյութական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտման համար կարգապահական պատասխանատվության դատավորները ենթարկվել են պատասխանատվության հիմնականում 2012թ-ին՝ համաներման ակտի սխալ կիրառման համար: Օրինակ, Արդարադատության խորհրդի 2012 թվականի փետրվարի 10-ի ԱԽ-1-Ո-7 որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզի դատարանի դատավոր Լ. Աթանյանը պատասխանատվության է ենթարկվել այն բանի համար, որ Հայաստանի Հանրապետության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին ՀՀ ազգային ժողովի 26.05.2011թ. որոշման 9-րդ կետով նախատեսվված սահմանափակումն անտեսելու հետևանքով, մասնավորապես (…) դատապարտված է եղել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով, որի նկատմամբ համաներումը կիրառելի չէր, Համաներման ակտի կիրառմամբ դատապարտյալին ազատել է Երևանի քրեական դատարանի 08.07.2008թ. դատավճռով նշանակված պատժի կրումից:

Արդարադատության խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 23-ի ԱԽ-23-Ո-28 որոշմամբ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Խաչատրյանը կարգապահական պատասխանատվության է ենթարկվել նյութական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման համար, ինչպես նաև դատավոր վարքագծի կոպիտ խախտումներ համար: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասով դատավպարտված անձիի նկատմամբ դատավճիռ կայացնելիս առանց որևէ հիմնավորման նշանակել է հոդվածի սանկցիայով նախատեսված (հանցավոր արարքը կատարելու ժամանակ քրեական օրենսգրքով նախատեսված է եղել հինգից ութ տարի ժամկետով ազատազրկում) պատժի նվազագուն չափից ավելի ցածր պատիժ: Ավելին, Խորհուրդը գտել է, որ դատավորը պատիժ նշանակելու հարցը քննարկելիս չի դրսևորել պատշաճ մասնագիտական պատրաստվածություն՝ չապահովելով ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների պատշաճ իմացություն:

Արդարադատության խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի ԱԽ-16-Ո-22 որոշմամբ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյան դատարանի դատավոր Ա. Դավթյանը կարգապահական պատասխանատվության է ենթարկվել *նյութական և դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումների համար*: Մասնավորապես, խորհուրդն արձանագրել է, որ դատարանը դուրս գալով օրենքով սահմանված լիազորությունների սահմաններից, ճանաչել է հայցվորի սեփականության իրավունքը ինքնակամ կառուցված շինության նկատմամբ այն պայմաններում, երբ դատական կարգով դատական կարգով կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման իրավական հիմքը բացակայում է, և *ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ վեճը ենթակա չէ դատարանում քննության, իսկ գործի վարույթը կարճման*:

Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ որոշմամբ Արդարադատության խորհուրդը անդրադարձել է նաև գործով պատասխանողին ներգրավելու հարցին, որը, ըստ էության դուրս է եղել այն ենթադրյալ խախտումների շրջանակից, որոնց հիմքով դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Չնայած Արդարադատության խորհուրդն արձանագրել է, որ *«Խորհուրդը գործում է՝ որպես դատարան եզրույթը չպետք է մեկնաբանել որպես վերադաս դատական ատյան, որը վերանայում է կայացված դատական ակտերը նյութական և (կամ) դատավարական օրենքի նորմի խախտման հիմքով, այլ գործելով որպես կարգապահական դատարան՝ Խորհուրդը քննարկում է միայն դատավորին վերագրվող խախտման ակնհայտ և կոպիտ լինելու հանգամանքը, այսինքն՝ այնպիսի էական, անվիճելի և անհերքելի խախտման փաստեր, որոնք խաթարել են արդարադատության բուն էությունը»*[19]:

Ուսումնասիրությունը, մինչդեռ, ցույց է տալիս, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունները, ինպես նաև դրանց առնչությամբ Արդարադատության խորհրդի որոշումները հիմնվում են նյութական կամ դատավարական օրենքի նորմի վերաբերյալ արված մեկնաբանության, դատավորների կողմից գործի հանգամանքների ու փաստերի գնահատման ու մեկնաբանության, տրված պատճառաբանության վերլուծության վրա, ինչը, սակայն, կարող է իրականացվել միայն վերադաս դատական ատյանի կողմից դատական ակտի բողոքարկման արդյունքում:

- ***Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի կարճումը***

ՀՀ դատական օրենսգքրի 162-րդ հոդվածի համաձայն՝

1. Արդարադատության խորհուրդը կարճում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը այն դեպքում, երբ՝
   1) Հիմնավորված չէ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը,
   2) Վարույթը հարուցվել է սույն օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետների խախտմամբ, եթե դատավորը համաձայն է վարույթի կարճմանը նշված հիմքով,
   3) Դադարեցվել են նրա լիազորությունները, կամ նա ազատվել է իր պաշտոնից:
2. Եթե Արդարադատության խորհուրդը նպատակահարմար չի գտնում դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժի միջոց, ապա կարող է բավարարվել հարցի քննարկմամբ՝ որոշմամբ ամրագրելով կարգապահական պատասխանատվության հիմքերի առկայությունը և կարճելով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը: Սույն մասը նույն դատավորի նկատմամբ կարող է կիրառվել միայն մեկ անգամ:

Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ 11կարգապահական վարույթներով Արդարադատության խորհրդի կողմից կայացվել է գործըկարճելու մասին որոշում: Որպես դատավորի կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործի կարճման հիմք՝եղել են.

- ***Կարգապահական պատասխանատվության հիմքի չհիմնավորվածությունը***

Արդարադատության խորհուրդը կայացրել է 4 որոշում, որոնցով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին գործով չի հիմնավորվել կարգապահական

[19]Տես օրինակ, Արդարադատության խորհրդի 2015 թվականի ապրիլի 4-ի

պատասխանատվության հիմքը: Բոլոր դեպքերում Արդարադատության խորհուրդը գտել է, որ դատավորի կողմից թույլ չեն տրվել նյութական կամ դատավարական օրենքի նորմի կոպիտ և ակնհայտ խախտում:

Այսպես,2014 թվականի ապրիլի 4-ի ԱԽ-7-Ո-2 և ԱԽ-7-Ո-3 որոշումներով Արդարադատության խորհուրդն արձանագրել է, որ «դատավորին վերագրվող խախտումը չի կարող համարվել ակնհայտ և կոպիտ, եթե այն չի պարունակում ՀՀ Սահմանադրության կամ օրենքների այնպիսի էական, անվիճելի և անհերքելի խախտումներ, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, չհիմնավորված և չպատճառաբանված որոշման կայացմանը: Հետևաբար, այն չի կարող նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ: Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ արդարադատություն իրականացնելիս դատավորի կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական օրենքների նորմերի էական, անվիճելի և անհերքելի խախտումներ, ուստի Խորհուրդն անհրաժեշտ և նպատակահարմար չի համարում անդրադառնալ դատավորի գործողություններում մեղքի առկայության կամ բացակայության հարցին: Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ հիմնավորված չէ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հետևաբար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կարգապահական գործը ենթակա է կարճման»:

2016 թվականի սեպտեմբերի 30-ի ԱԽ-21-Ո-18 որոշմամբ Արդարադատության խորհուրդը փաստել է, որ «որ եզրակացությամբ դատավոր Ա. Հովհաննիսյանին վերագրվող երկրորդ խախտման հիմքում դրված է հայցի ապահովման դատավարական ինստիտուտի սահմանման օրենսդրական նպատակի՝ վարույթ հարուցողի կողմից արված մեկնաբանությունը, իսկ Խորհրդի գնահատմամբ, այն դեպքում, երբ առկա չէ օրենքի որևէ նորմի ակնհայտ և կոպիտ խախտում (օրենքով նախատեսված չէ այնպիսի նորմ, որը դատավորի կողմից խախտվել է), սոսկ վարույթ հարուցողի՝ օրենքի մեկնաբանությունը չի կարող ամեն դեպքում դիտարկվել որպես արդարադատություն իրականացնելիս դատավորի կողմից թույլ տրված դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, քանի որ այդ պարագայում ուղղակիորեն կխախտվի դատավորի կողմից օրենքը իր ընկալմամբ մեկնաբանելու համար պատասխանատվության ենթակա չլինելու՝ ՀՀ դատական օրենսգրքի 153.2-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված արգելքը»:

Արդարադատության խորհրդի 2016 թվականի մայիսի 13-ի ԱԽ-9-Ո-9 որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներԿ. Հակոբյանի, Ա. Խառատյան և Լ. Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճվել է այն հիմնավորմամբ, որ դատավորների կողմից թույլ չեն տրվել նյութական և դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ:

Մասնավորապես, ըստ վարույթ հարուցող անձի մեկնաբանության՝ նվիրատվության վերացման հիմքում ընկած հանգամանքների՝ նվիրատուի կամ նրա հարազատի կյանքի դեմ ոտնձգությունը, պետք է հաստատվեր միակ թույլատրելի ապացույցով՝ այն է դատավճռով կամ քրեական գործով որոշմամբ, ինչը չի կատարվել տվյալ գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից՝ հանգեցնելով անձի անմեղության կանխավարկածի խախտման: Արդարադատության խորհուրդը, հիմք ընդունելով օրենքի մեկնաբանության և դրա հիման վրառորոշման կայացման լիարժեք անկախության սկզբունքը, ինչպես

նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության վերաբերյալ տրված մեկնաբանությունը, գտել է, որ «Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արված մեկնաբանությունը, այն է՝ նվիրատվության վերացման համար նշված նորմով սահմանված պայմաններն օրենսդիրը հնարավոր է համարել հաստատել նաև այլ ապացույցներով, և նման մեկնաբանմամբ պայմանավորված նվիրատվության վերացման պայման հանդիսացող կյանքի դեմ ոտնձգություն կատարելը համապատասխան գրավոր ապացույցներով և վկաների ցուցմունքներով հաստատված համարելը, չեն կարող դիտարկվել որպես արդարադատություն իրականացնելիս դատավորի կողմից թույլ տրված նյութական և դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ»:

Իսկ կարգապահական վարույթ հարուցած անձի կողմիցդատավորներին վերագրված երկրորդ խախտման հիմքով, ըստ որի՝ Դատարանը Դ. Թահմազյանի և Ք. Թահմազյանի միջև կնքված նվիրատվության պայմանագիրն անվավեր է ճանաչել որպես Ռ. Ալիխանյանի և Դ. Թահմազյանի միջև կնքված նվիրատվության պայմանագրի հիման վրա կատարված նվիրատվության վերացման հետևանք, ***անվիճելի և անհերքելի չէ***, քանի որ թիվ ԵԿԴ/0860/02/12 քաղաքացիական գործով ներկայացված հայցի հիմքում դրվել են նաև նվիրառուի և վերջինիս ծնողի միջև առոչինչ գործարք կնքված լինելու վերաբերյալ փաստական հիմնավորումներ, որպիսի պայմաններում Դատարանի դիրքորոշումը Դ. Թահմազյանի և Ք. Թահմազյանի միջև կնքված նվիրատվության պայմանագրի մասով չի կարող միանշանակ գնահատվել որպես Ռ. Ալիխանյանի և Դ. Թահմազյանի միջև կնքված նվիրատվության պայմանագրի հիման վրա կատարված նվիրատվության վերացման հետևանք: Տվյալ դեպքում դատավորների կողմից խախտում թույլ տալու վերաբերյալ ***առաջացել են չփարատված կասկածներ***, որոնք պետք է մեկնաբանվեն հօգուտ դատավորների, ուստի Խորհուրդը գտնում է, որ դատավորներ Կ. Հակոբյանին, Ա. Խառատյանին և Լ. Գրիգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ՀՀ արդարադատության նախարարի միջնորդությունն այս մասով ևս ենթակա է մերժման:

- ***Կարգապահական վարույթի ժամկետի խախտում***

Ուսումնասիրված որոշումներից երկուսի դեպքում գործը կարճվել է կարգապահական վարույթի ժամկետների խախտման հիմքով: Այսպես, Արդարադատության խորհրդի 2015 թվականի հունիսի 26-ի ԱԽ-20-Ռ-22 և 2017 թվականի հունվարի 25-ի ԱԽ-1-Ռ-1 որոշումներով գործը կարճվել է կարգապահական վարույթի ժամկետների խախտման՝ երկու դատավորին նյութերն ուղարկելու օրենքով սահմանված ժամկետի խախտման հիմքով:

- ***Դատավորի լիազորությունների դադարեցված լինելը***

Արդարադատության խորհրդի 2013 թվականի ապրիլի 12-ի ԱԽ-12-Ռ-21 որոշմամբ գործը կարճվել է այն հիմնավորմամբ, որ այլ՝ ԱԽ-7-Ռ-13 որոշմամբ Արդարադատության խորհուրդը դիմել է ՀՀ նախագահին՝ դատավոր Ալեքսանդր Մերանգուլյանի լիազորությունները դադարեցնելու համար, հետևաբար ՀՀ դատական օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ համաձայն՝ վարույթը ենթակա է կարճման:

- ***Հարցի քննարկմամբ բավարարվելը***

Ուսումնասիրված որոշումներից չորսով Արդարադատության խորհուրդը կարճել է գործով վարույթը, թեև արձանագրել է դատավորի կողմից կարգապահական խախտման փաստը, սակայն նպատակահարմար չի գտել դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժի միջոց և բավարարվել է հարցի քննարկմամբհիմնվելով՝ ՀՀ դատական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասի վրա:

Մինչդեռ անհրաժեշտ էփաստել, որ Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական տույժի չենթարկելու պատշաճ հիմնավորումներ չեն ներկայացվել:

Մասնավորապես, 2016 թվականի սեպտեմբերի 30-ի ԱԽ-21-Ո-18 որոշմամբ Արդարադատության խորհուրդը գտել է, որ դատավոր Ա. Հովհաննիսյանը «քաղաքացիական գործերով կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասով չնախատեսված հայցի ապահովման միջոցներ, թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի ակնհայտ և կոպիտ խախտում (…) որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով, հեղինակազրկում է արդարադատությունը և կատարված է կոպիտ անփութությամբ, քանի որ դատավորը տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր կանխատեսել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Միաժամանակ, Արդարադատության խորհուրդը գտել է, որ (…) կարող է բավարարվել հարցի քննարկմամբ՝ որոշմամբ ամրագրելով կարգապահական պատասխանատվության հիմքերի առկայությունը և կարճելով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը: Խորհուրդը հիմք է ընդունել միայն, որ «*ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Հովհաննիսյանը փորձառու դատավոր է (պաշտոնավարում է 2008 թվականից) և աչքի է ընկել օրինավոր վարքագծով*»:

Թիվ ԱԽ-3-Ո-7 որոշմամբ Արդարադատության խորհուրդն արձանագրել է կարգապահական պատասխանատվության հիմքերի առկայությունը, սակայն բավարարվել է հարցի քննարկմամբ՝ հաշվի առնելով, որ «*դատավորը փորձառու դատավոր է, աչքի է ընկել օրինավոր վարքագծով, իր գործունեության նպաստում է արդարադատության որակի բարձրացմանը, ինչը հաստատվել է դատարանների նախագահների խորհրդի պատվոգրով և հուշանվեր ժամացույցով: Բացի այդ, լինելով Արցախյան ազատամարտի մասնակից և ունենալով բազմաթիվ պարգևներ ներկայումս էլ աշխատում է սահմանամերձ գոտում*»:

Արդարադատության խորհրդի 2015 թվականի ապրիլի 13-ի ԱԽ-13-Ո-16 որոշմամբ Արդարադատության խորհուրդը կարճել է վարույթը՝ բավարարվելով հարցի քննարկմամբ՝ *հաշվի առնելով տուժողի համաձայնությունը ստանալու իր բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու համար և խախտման արդյունքում փաստացի որևէ հետևանքի չառաջանալը*:

Դատավորներին կատմամբ կիրառված տույժի տեսակները

Ըստ նախկին ՀՀ դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի՝

1. *Դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը քննելու արդյունքում Արդարադատության խորհուրդը կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը՝*
   1) *Նախազգուշացում,*
   2) *Նկատողություն, որը զուգորդվում է՝ դատավորին 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով,*
   3) *Խիստ նկատողություն, որը զուգորդվում է՝ դատավորին 1 տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով,*
   4) *Դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը:*
2. *Նախազգուշացումը դատավորին տրվող պաշտոնական նախատինք է, որը կիրառվում է Արդարադատության խորհրդի կողմից նվազ ծանրության ճանաչված կարգապահական խախտման համար, եթե դատավորը չունի տույժ:*
3. *Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժի տեսակը ենթակա է կիրառման այն դեպքում, եթե դատավորի կողմից թույլ տրված կարգապահական կոպիտ կամ պարբերական խախտման հետևանքով նա այլևս անհամատեղելի է դատավորի պաշտոնի համար:*
4. *Դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Արդարադատության խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, դատավորի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, դատավորին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*
5. *Եթե նկատողություն կամ խիստ նկատողություն ստանալու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում, իսկ նախազգուշացում ստանալու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, դատավորը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա նա համարվում է կարգապահական տույժ չունեցող:*
6. *Եթե դատավորը հաջորդաբար ենթարկվել է կարգապահական տույժերի, որոնք առաջացնում են աշխատավարձի իջեցում, ապա աշխատավարձի ընդհանուր իջեցումը յուրաքանչյուր ամիս չի կարող գերազանցել աշխատավարձի 50 տոկոսը:*

Ուսումնասիրված որոշումներով դատավորները ենթարկվել են հետևյալ կարգապահական տույժերի՝

- 27 դատավոր – նախազգուշացում,
- 13 դատավոր - նկատողություն՝ զուգորդված դատավորին 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսով զրկելով,
- 3 դատավոր - խիստ նկատողություն՝ զուգորդված դատավորին 1 տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսով զրկելով,
- 1 դատավոր - Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու միջնորդությամբ դիմելը:

ՀՀ նախկին դատական օրենսգրքի 157-րդ հոդվածը սահմանում էր, որ դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Արդարադատության խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, դատավորի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, դատավորին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Միաժամանակ, չնայած ՀՀ դատական օրենսգրքով նախազգուշացում և դատավորի լիազորությունները դադարեցնելու միջնորդությամբ դիմելու տույժերի կիրառման չափանիշները որոշակիորեն սահմանված էին, նկատողություն և խիստ նկատողություն կարգապահական տույժերի դեպքում Դատական օրենսգիրքը լռում էր:

Օրենսդրական նման կարգավորումների պայմաններում Արդարադատության խորհուրդն ուներ հայեցողության լայն շրջանակ, ինչը հանգեցրել է պրակտիկայում կամայական և չհիմնավորված կարգապահական տույժերի նշանակման:

Ուսումնասիրված որոշումներում դատավորի նկատմամբ կիրառված կոնկրետ տույժի տեսակի ընտրությունը հիմնավորված չի եղել:

Այսպես, օրինակ, Արդարադատության խորհրդի 2015 թվականի փետրվարի 3-ի ԱԽ-3-Ո-8 որոշմամբ հիմք է հանդիսանում: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի […] հոդվածներով, 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Խորհուրդը որոշեց ՀՀ Արդարադատության խորհուրդը նշել է, որ «արդարադատություն իրականացնելիս Դատարանի դատավոր Ա. Մկոյանը թույլ է տվել վարքագծի կանոնի կոպիտ խախտում, որը ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդությունը բավարարել: ***ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Մկոյանին հայտարարել նախազգուշացում***»:

Նույն կերպ՝ առանց որևէ հիմնավորման, Արդարադատության խորհրդի 2012 թվականի փետրվարի 10-ի ԱԽ-1-Ո-5 որոշմամբհամաներման ակտի սխալ կիրառման՝ դրանով ուղղակի բացառության առկայության պայմաններում, անձի նկատմամբ համաներում կիրառելու և պատժից ազատելու դեպքում, Արդարադատության խորհուրդը գտել է, որ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ռ. Մելքոնյանն արդարադատություն իրականացնելիս թույլ է տվել նյութական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, որը ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժող դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է հանդիսանում: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի […] 157-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ հետով՝ խորհուրդը որոշեց Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի միջնորդությունը բավարարել: ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատավոր Ռ. Մելքոնյանին հայտարարել ***խիստ նկատողություն՝ զուգորդված մեկ տարի ժամկետով աշխատավարձի քսանհինգ տոկոսից զրկելով***:

Մինչդեռ, նույն՝օրենքով նախատեսված բացառության պայմաններում «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ որոշման (հետայսու՝ համաներման ակտ) կիրառմամբ անձին պատժից ազատելու համար այլ դատավորի նշանակվել է կարգապահական այլ պատասխանատվության տեսակ: Մասնավորապես, որոշմամբ Խորհուրդը գտել է, որ դատավոր Վլադիմիր Գրիգորյանը, դուրս գալով իր լիազորությունների սահմաններից և հՀամաներման ակտով նախատեսված ուղղակի արգելքի պայմաններում Ս. Մ. նկատմամբ համաներման ակտը կիրառելով, թույլ է տվել նյութական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ, որոնք ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք են հանդիսանում: Ելնելով վերագրալից և ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի […] 157-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Խորհուրդը որոշեց ՀՀ արդարադատության նախարարի միջնորդությունը բավարարել: Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վլադիմիր Գրիգորյանին հայտարարել ***նկատողություն՝ զուգորդված վեց ամիս ժամկետով աշխատավարձի քսանհինգ տոկոսից զրկելով***:

Համաներման ակտի սխալ սխալ կիրառման հետևանքով անձին պատժից ազատելու հիմքով դատավորին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Արդարադատության խորհրդի 2012 թվականի փետրվարի 10-ի ԱԽ-1Ո-2 որոշմամբ, ինչպես նաև դատավորի կողմից համաներման կիրառման լիազորություն չունենալու պայմաններում համաներում կիրառելու համար Արդարադատության խորհրդի 2012 թվականի փետրվարի 10-ի ԱԽ-1-Ո-3 որոշմամբ դատավորներ Տ. Պետրոսյանը և Վ. Խալաթյանը ենթարկվել են ***նախազգուշացում կարգապահական տույժի***:

Այսպիսով, նույնանման արարքի համար տարբեր դատավորների նկատմամբ պատասխանատվության տարբեր միջոցներ են կիրառվել, ինչն անհիմն ու անընդունելի է:

Արդարադատության խոհրդի 2012 թվականի օգոստոսի 24-ի ԱԽ-15-Ո-21 որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Ա. Պետրոսյանի, Կ. Չիլինգարյանի, Ա. Թումանյանի նկատմամբ նույն արարքի համար կիրառված տարբեր կարգապահական տույժերը (մասնավորապես, դատավոր Ա. Պետրոսյանի և Ա. Թումանյանի նկատմամբ կիրառել է նախազգուշացում, Կ. Չիլինգարյանի նկատմամբ նկատողություն՝ զուգորդված 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով), որպես հիմնավորում ներկայացրել է, որ «*դատավոր Կ. Չիլինգարյանի համար կարգապահական պատասխանատվության տեսակի ընտրության հարցում հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ նրան մեկ այլ գործով՝ Արդարադատության խորհրդի 2011 թվականի հունիսի 3-ի թիվ ԱԽ-11-Ո-14 որոշմամբ, հայտարարվել է նկատողություն՝ զուգորդված վեց ամիս ժամկետով աշխատավարձի քսանհինգ տոկոսից զրկելով*»:

Արդարադատության խորհուրդը 2013թվականի փետրվարի 28-ի ԱԽ-7-Ո-13 որոշմամբ դատավորի լիազորությունները դադարեցնելու միջնորդությամբ Հանրապետության նախագահին դիմելը կարգապահական տույժն ընտրելիսհաշվի է առել «նաև այն հանգամանքը, որ դատավոր Ա. Մերանգուլյանը նախկինում ևս ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, յուրաքանչյուր անգամ, այդ թվում՝ Արդարադադտության խորհրդի 2012 թվականի հուլիսի 24-ի ԱԽ-14-Ո-18 որոշմամբ, որպես

կարգապահական տույժ դատավորի նկատմամբ կիրառելով խիստ նկատողություն՝ զուգորդված մեկ տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով: ՀՀ դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության նախագահին դիմելը որպես կարգապահական տույժի տեսակ ենթակա է կիրառման այն դեպքում, եթե դատավորի կողմից թույլ տրված կարգապահական կոպիտ կամ պարբերական խախտման հետևանքով նա այլևս անհամատեղելի է դատավորի պաշտոնի համար: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի […] 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ խորհուրդը որոշեց Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի միջնորդությունը բավարարել: Դիմել ՀՀ նախագահին՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Մերանգուլյանի լիազորությունները դադարեցնելու միջնորդությամբ»:

Ինչպես վերը նշվեց, ՀՀ դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում էր, որ դատավորի լիազորությունները դադարեցնելու միջնորդությամբ Հանրապետության նախագահին դիմելը կարգապահական տույժի տեսակը ենթակա է կիրառման այն դեպքում, եթե դատավորի կողմից թույլ տրված կարգապահական **կոպիտ կամ պարբերական** խախտման հետևանքով նա այլևս անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:

Օրենսդրական նման կարգավորումը,ըստ էության, չէր հստակեցնում, թե որ խախտումներնեն համարվում ***կոպիտ խախտում***, որը թույլ տալու դեպքում անձն այլևս անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ, ինչպես նաև ***պարբերական*** քանի և ինչ բնույթի խախտումների դեպքում դատավորն այլևս անհամատեղելի է պաշտոնի հետ: Սա հատկապես կարևորվում էր այն պատճառով, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսացող արարք համարվում էր նյութական և դատավարական օրենքի նորմերի կոպիտ և ակնհայտ խախտումը: Ավելին, նույն պարբերական եզրույթը կիրառվում էր դատավորի կողմից վարքագծի կանոնների խախտման առնչությամբ:

Մինչդեռ, Արդարադատության խորհրդի որոշմամբ տվյալ անհստակությունը չի մեկնաբանվել, և դատավորի նկատմամբ ծանրագույն կարգապահական տույժի միջոցի կիրառումը չի հիմնավորվել:

Այսպիսով, Արդարադատության խորհրդի որոշումներով դատավորների նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվության տեսակները որևէ հիմնավորում չեն պարունակում և նույն արարքի համար տարբեր դատավորներ առանց որևէ հստակ հիմքերի մատնանշման ենթարկվում են տարբեր կարգապահական տույժերի: